

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 30/5

25 նոյեմբերի 2014 թ.

Քննարկվեց «Տիգրանակերտ» ՍՊԸ 28.10.2014 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Էրեբունու ՀՏ 27.10.2014 թ-ի թիվ 5100519 ստուգման ակտի դեմ:

«Տիգրանակերտ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

Հիմք ընդունելով «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի դրույթները գանգատաբերը հայտնում է, որ 26.09.2014 թ-ին Էրեբունու ՀՏ աշխատակից հարկային տեսուչ Վաչե Սարգսյանը մտել է Նորք Մարաշ 5 փ., 8-րդ տուն հասցեում գործող «Տիգրանակերտ» ՍՊԸ մանրածախ առևտրի կետ և առանց գնում կատարելու ու ծառայողական վկայականը ներկայացնելու վաճառողուհի Վարդուհի Հարությունյանից պահանջել է ներկայացնել հսկիչ-դրամարկղային կտրոն: Այնուհետև պահանջել է ներկայացնել նաև ֆիսկալ հաշվետվություն: Վիճելով վաճառողուհու հետ և մի կողմ հրելով նրան հարկային տեսուչն ինքնակամ հանել է Z հաշվետվությունը և հայտնել, որ «բռնված են»: Վաճառողուհին պահանջել է ներկայացնել վկայականը, սակայն հարկային տեսուչը պատասխանել է, որ այն մեքենայի մեջ է:

Ըստ գանգատի, փաստն այն է, որ հարկային տեսուչի կողմից ոչ մի հսկիչ գնում չի կատարվել և որևէ գնված ապրանք չի ներկայացվել: Հաճախորդի բողոքի արդյունքում ծագած վեճի հետևանքով հարկային տեսուչը հեռացել է խանութից: Նշվածից հետևում է, որ ոչ մի հսկիչ գնում չի կատարվել: Խախտվել են հսկիչ գնումների իրականացման կարգի 1-4-րդ կետերի պահանջները՝ առանց հանձնարարական ներկայացնելու և արձանագրություն կազմելու հարկային տեսուչը հեռացել է, սակայն արձանագրության 2-րդ էջում նշված է «Հրաժարվեց ստորագրել և հետ ընդունել», ինչը չի համապատասխանում իրականությանը:

Թիվ 5100519 ակտում նշված է, որ հարկային տեսուչներն ընկերության տնօրենի մասնակցությամբ կատարել են ստուգում, որն իրականությանը չի համապատասխանում, քանի որ այդ պահին ընկերության տնօրենը բացակայել է հանրապետությունից:

Ելնելով վերոգրյալից՝ գանգատաբերը խնդրում է անվավեր ճանաչել ստուգման ակտը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Էրեբունու ՀՏ պետի 03.09.2014 թ-ի թիվ 6200992 հանձնարարագրի համաձայն «Տիգրանակերտ» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Արդյունքում, 26.09.2014 թ-ին կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 6200992 արձանագրությունը, որում մասնավորապես նշվել է.

ՀՀ ՖՆ Էրեբունու ՀՏ հարկային տեսուչ Գևորգ Պետրոսյանը 26.09.2014 թ-ին, ժամը 16:40-ին ք.Երևան, հին Նորք 5-րդ փող., թիվ 8 հասցեում գործող «Տիգրանակերտ» ՍՊԸ-

ին պատկանող մանրածախ վաճառքի խանութից կատարել է հսկիչ գնում 300 դրամ արժողությամբ (0.5 լ ջուր «Բյուրեղ», 1 շիշը 150 դրամ), որի դիմաց վճարված կանխիկ գումարը չմուտքագրվեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրվեց:

Հսկիչ գնումն իրականացնող անձանց կողմից ներկայացվել են ծառայողական վկայականները և հսկիչ գնում կատարելու վերաբերյալ հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև ժամը 16:45-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել Z հաշվետվություն, որում հասույթը կազմել է 7470 դրամ: Տեսուչների պահանջով չմուտքագրված գումարը՝ 300 դրամը, ժամը 16:46-ին մուտքագրվել է ՀԴՄ և նորից դուրս է բերվել Z հաշվետվություն՝ գումարով 300 դրամ: Գնված ապրանքները հարկային տեսուչներն վաճառողուհուն առաջարկել են հետ ընդունել, սակայն վերջինս հրաժարվել է դրանք հետ ընդունել:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ «Տիգրանակերտ» ՍՊԸ կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները, որն առաջացնում է պատասխանատվություն՝ «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ ֆինանսների նախարարի կողմից 03.10.2014 թ-ին հրապարակվել է թիվ 5100519 հանձնարարագիրը, որի համաձայն ընկերությունում իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Էրեբունու ՀՏ 27.10.2014 թ-ի թիվ 5100519 ստուգման ակտը, որով վերոգրյալ խախտման համար կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ պարբերությամբ նախատեսված տուգանքը՝ գումարով 300.000 դրամ:

Քննարկման ընթացքում ընկերության ներկայացուցիչները նշեցին, որ հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 6200992 արձանագրությունում նշվածը չի համապատասխանում իրականությանը, այն է՝ 26.09.2014 թ-ին, ժամը 16:40-ին «Տիգրանակերտ» ՍՊԸ-ին պատկանող խանութից 300 դրամի գնում չի իրականացվել: Բացի այդ, հարկային տեսուչները տեղում չեն ներկայացրել ծառայողական վկայականները, ինչպես նաև հսկիչ գնում կատարելու վերաբերյալ հանձնարարագիրը:

Հսկիչ գնումն իրականացրած անձ՝ հարկային տեսուչ Գևորգ Պետրոսյանը պնդեց, որ 26.09.2014 թ-ին, ժամը 16:40-ին «Տիգրանակերտ» ՍՊԸ-ին պատկանող մանրածախ վաճառքի խանութից իր կողմից գնվել է երկու շիշ «Բյուրեղ» տեսակի ջուր, որի դիմաց վճարել է 300 դրամ, սակայն համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրվել:

Հարկային տեսուչ Գևորգ Պետրոսյանը նշեց նաև, որ նշված ապրանքների վաճառքն իրականացվել է ոչ թե սույն գանգատի քննությանը մասնակցող՝ վաճառողուհի Վարդուհի Հարությունյանի, այլ տարիքով ավելի երիտասարդ մեկ այլ վաճառողուհու կողմից, որը խախտումն արձանագրելու պահին հրաժարվել է ներկայանալ: Ընդ որում, այդ մասին համապատասխան գրառում է կատարված հսկիչ գնումների արդյունքում վաճառված ապրանքների հետընդունման թիվ 6200992 ակտում:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ սույն գանգատի քննությանը մասնակցող ընկերության տնօրենը և նրա եղբոր որդին վերոգրյալ ապրանքների գնման պահին խանութում չեն գտնվել: Մասնավորապես, հսկիչ գնման օրն ընկերության տնօրենը բացակայել է հանրապետությունից, իսկ նրա եղբոր որդին խանութ է մտել միայն գնումը կատարված լինելուց հետո, երբ հարկային տեսուչը փորձել է ՀԴՄ-ից դուրս բերել խախտումը հիմնավորող համապատասխան ապացույցները: Հետևապես, թե ընկերության տնօրենի, թե նրա եղբոր որդու պնդումները վերոգրյալ ապրանքների գնումը կատարված չլինելու վերաբերյալ, ըստ էության, չեն կարող հիմնավոր համարվել:

Պարզվեց նաև, որ հսկիչ գնման օրն ընկերության տնօրենի եղբոր որդին, ըստ էության, հանդես է եկել որպես ընկերության ներկայացուցիչ՝ տնօրենին փոխարինող անձ: Սակայն, քննարկման ընթացքում պարզվեց, որ վերջինս նման լիազորությամբ օժտված չի եղել:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում հսկիչ գնումն իրականացնող պաշտոնատար անձանց կատարած համապատասխան գործողությունների արդյունքում ձեռք բերված ապացույցները հիմնավորում են հսկիչ գնմամբ ձեռք բերված ապրանքների դիմաց վճարված գումարը ՀԴՄ չմուտքագրվելու և համապատասխան ՀԴՄ կտրոն չտրամադրելու փաստը: Մասնավորապես, հսկիչ գնումից հետո՝ ժամը 16:45-ին, ՀԴՄ-ից դուրս է բերվել Z հաշվետվություն, որում կատարված վճարման արժեքը ներառված չի եղել: Այնուհետև կատարված վճարման արժեքը մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոն և ժամը 16:46-ին կրկին անգամ դուրս է բերվել Z հաշվետվությունը:

Բացի այդ, ղեկավարվելով ՀՀ կառավարության 27.11.2003 թ-ի թիվ 1561-Ն որոշմամբ հաստատված կարգի 6.1 կետի դրույթներով հսկիչ գնումն իրականացնող պաշտոնատար անձինք փորձել են վերադարձնել հսկիչ գնմամբ ձեռք բերված ապրանքները, որի վերաբերյալ 26.09.2014 թ-ին կազմվել է հսկիչ գնումների արդյունքում վաճառված ապրանքների հետընդունման թիվ 6200992 ակտը: Սակայն ընկերության անունից ապրանքներ վաճառող աշխատակիցը հրաժարվել է հետընդունել հսկիչ գնմամբ ձեռք բերված ապրանքները և ստորագրել հետընդունման թիվ 6200992 ակտը:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ վերոգրյալ փաստական հանգամանքները հիմնավորում են ընկերության կողմից ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները խախտած լինելու հանգամանքը, որն իր հերթին առաջացնում է պատասխանատվություն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Էրեբունու ՀՏ 27.10.2014 թ-ի թիվ 5100519 ստուգման ակտը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

